ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2022

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ	
ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ	

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 **Ի՞նչ տվյալներ չի փոխանցում GPS (գլոբալ տեղորոշման համակարգ)-ը։**

1) ձգողական ուժը
2) աշխարհագրական երկայնությունը
3) աշխարհագրական լայնությունը
4) բացարձակ բարձրությունը

2 **Միջազգային տնտեսական հարաբերությունների վերաբերյալ պնդումներից ո՞րն է *սխալ։***

1) Պետություններին վարկեր և փոխառություններ տրամադրում են հիմնականում ֆինանսական միջազգային կազմակերպությունները՝ Արժույթի միջազգային հիմնադրամը, Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը։
2) Որևէ երկրի տնտեսական ներգրավվածությունը չափվում է արտահանման մասնաբաժնով։
3) Ներկայումս միջազգային տնտեսական հարաբերություններում հիմնականը Հյուսիսից Հարավ ուղղությունն է, որտեղ առաջատարը Հարավն է։
4) Համաշխարհային առևտուրը համակարգվում է Առևտրի համաշխարհային կազմակերպության կողմից, որին անդամակցում է նաև ՀՀ-ն։

3 **Երկրաբանական ո՞ր դարաշրջանում է ձևավորվել Գոնդվանա մայրցամաքը։**

1) Կայնոզոյան
2) Արխեյան
3) Պալեոզոյան
4) Մեզոզոյան

4 **Ինչու՞ աշնանային գիշերահավասարից գարնանային գիշերահավասար և գարնանանայինից աշնանային գիշերահավասար օրերի քանակը հավասար չեն բաշխված։**

1) Երկրի առանցքի թեքությունը պտտման ուղեծրի հարթության նկատմամբ 66,5°է։
2) Արեգակի շուրջ Երկիրը պտտվում է էլիպսաձև ուղեծրով։
3) Տարվա տևողությունը 365 օր 6 ժամ է։
4) Արեգակը պտտվում է Ծիր կաթին համաստեղության կենտրոնի շուրջը։

5 **0-ական միջօրեականով Հյուսիսային բևեռից դեպի հասարակած շարժման ուղղությունը ի՞նչ ազիմուտ ունի։**

1) 180˚
2) 0˚
3) 360˚
4) 90˚

6 **Ստորև թվարկված զուգակցություններից՝ «կլիմայական գոտի — բնական զոնա հողային տիպ» ո՞րն է համապատասխան։**

1) մերձարկտիկական — արկտիկական անապատներ — գորշ անապատային
2) հասարակածային — սավաննա — դարչնագույն
3) մերձարևադարձային — կոշտատերև անտառներ — դարչնագույն
4) բարեխառն — տափաստան — ճմապոդզոլային

7 **Ընտրել այն երկիրը, որը բնութագրվում է մթնոլորտային ճնշման տարեկան ամենափոքր տատանումով։**

1) Ինդոնեզիա
2) Արգենտինա
3) Բրազիլիա
4) Հնդկաստան

8 **Ո՞ր հնագույն պլատֆորմի վրա են գտնվում ամենաշատ քանակով պետություններ։**

1) Հյուսիսամերիկյան
2) Հարավամերիկյան
3) Արևելաեվրոպական
4) Աֆրիկական

9 **Ընտրել ճիշտ պնդումը։**

Ստորև թվարկված պնդումներից ո՞րն է պարունակում տեղեկություն կլիմայի մասին։

1) Շաբաթվա վերջում Շիրակի մարզում օդի ջերմաստիճանը կիջնի 0-ից ցածր։
2) Երեկ Երևանում ամբողջ օրը ամպամած էր, երեկոյան խիտ մառախուղ էր։
3) Ամռանը Սինգապուրում մուսսոններն իրենց հետ բերում են մեծ քանակությամբ տեղումներ։
4) Սև ծովի ափին օդի ջերմաստիճանի փոփոխությունը վաղը կուղեկցվի տեղումներով և քամու ուղղության փոփոխությամբ։

10 Ընտրել ճիշտ պատասխանը:

Օդի ջերմաստիճանի և մթնոլորտային տեղումների տարեկան ընթացքից որոշել ՀՀ կլիմայական գոտին:

Ամիսներ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարի
ջերմաստիճան(C˚)	1,7	3,6	8,1	14,1	18,7	22,8	26,3	25,8	21,4	15,3	9,3	4,1	14,3
Տեղումներ (մմ)	14,2	16,6	30,4	41,1	51,3	28,1	10,5	7,6	11,5	23,3	23,3	13,4	271,4

1) ցուրտ լեռնային
2) չոր մերձարևադարձային
3) բարեխառն լեռնային
4) չոր խիստ ցամաքային

11 Ո՞ր երկրին է համապատասխանում հետևյալ բնորոշումը:

Դաշնային հանրապետություն է, որը համարվում է միակ զարգացած պետությունն այդ մայրցամաքում: Շատ հարուստ է հանքային ռեսուրսներով, բայց չունի նավթի, գազի և բոքսիտների պաշարներ: Այն բազմազգ է: Անասնապահության մեջ աչքի է ընկնում բրդատու այծերի և կարակուլի բուծումը:

1) ԿԴՀ
2) ՀԱՀ
3) ԱՄՆ
4) ԱՄԷ

12 Ո՞ր երկրին է համապատասխանում հետևյալ բնորոշումը:

Այս երկիրը բացարձակ բարձրության տատանման համաշխարհային ռեկորդակիր է: Այստեղ է գտնվում աշխարհի ամենաբարձրադիր լեռնաշխարհը:

1) Մեքսիկա
2) Հնդկաստան
3) Բոլիվիա
4) Չինաստան

13 **Ո՞ր լեզվաընտանիքին պատկանող լեզուներով են ամենաշատը խոսում աշխարհում:**

1) չին - տիբեթական
2) հնդեվրոպական
3) նիգեր - կորդոֆանյան
4) սեմաքամյան

14 **Այս տեսության կենտրոնում մարդն է, բնակչությունը: Ըստ այս տեսության՝ բնությունը և՛ սահմաններ է դնում, և՛ հնարավորություններ է ստեղծում իր յուրացման համար: Բնության վրա մարդու ներգործության եղանակները կախված են տվյալ ժողովուրդների ավանդույթներից և ապրելակերպից: Ո՞վ է այս տեսության հեղինակը:**

1) Ֆրիդրիխ Ռատցել
2) Հելֆորդ Մաքինդեր
3) Կարլ Հաուսհոֆեր
4) Վիդալ դը Լա Բլաշը

15 **Ո՞ր շարքում օրինաչափության սխալ կա:**

1) թեյ, սուրճ, կակաո
2) սոյա, կտավատ, արմավենի,
3) ցորեն, վարսակ, մանիոկ
4) ջութ, բամբակ, սիսալ

16 **Բնական ռեսուրս — առաջատար երկիր զույգերից ընտրել ճիշտը:**

1) բոքսիտ — Չիլի
2) նավթ — ԿԺԴՀ
3) ածուխ — ԱՄՆ
4) պղինձ — Նեպալ

17 **Նշվածներից ո՞րը գիտատեխնիկական հեղափոխության բաղադրիչ չէ.**

1) քվանտային տեխնիկայի զարգացում
2) մենեջերների պատրաստում
3) տրանսպորտի ինտենսիվացում
4) տարածքային համակենտրոնացում

18 **Ի՞նչ է նշանակում «քիմիական արտադրության արտահանում»:**

1) Քիմիական արդյունաբերության տեղաբաշխումը բազմաբնույթ է և կախված է մի շարք գործոններից:
2) Քիմիական արդյունաբերությունը սինթեզում է նյութեր, որոնք բնության մեջ չեն հանդիպում:
3) Քիմիական աղտոտող ձեռնարկությունները տեղաբաշխվում են զարգացող երկրներում:
4) Նավթագազաքիմիայի արտադրանքը արտահանվում է զարգացած երկրներ:

19 **Բնական ռեսուրսների գիտականորեն հիմնավորված տնտեսական գնահատումը հաշվի չի առնում.**

1) Գիտական հետազոտությունների տարածքային ուժեղ համակենտրոնացումը
2) Տեղակայման և շահագործման պայմանները
3) Տարածքի յուրացվածությունը և բնակեցվածությունը
4) Շրջակա բնական միջավայրը պահպանելու հնարավորությունը

20 **Նշվածներից ո՞րը գյուղատնտեսության սոցիալ — տնտեսական տիպ չէ.**

1) կապիտալիստական — ձեռնարկատիրական
2) պետական — կոոպերատիվ
3) համայնքային — տոհմացեղային
4) երկրագործական — անասնապահական

21 **Նշվածներից ո՞րն է կիրառում գենային ճարտարագիտությունը.**

1) գյուղմթերքի ստացումը մեկ միավոր հողահանդակների հաշվով
2) աճի հորմոնների օգտագործումը
3) մեկ շնչի հաշվով գյուղմթերքի օգտագործումը
4) երկրի ինքնապահովվածությունը պարենամթերքով

22 **Թվարկված «էրա — դարաշրջան — գլխավոր իրադարձություն» եռյակներից որու՞մ կա *անհամապատասխանություն.***

1) կրիպտոզոյան — պրոտերոզոյան — փափկամարմին օրգանիզմների առաջացում
2) ֆաներոզոյան — կայնոզոյան — մերկասերմ բույսերի առաջացում
3) կրիպտոզոյան — արխեյան — միաբջիջ բակտերիաների առաջացում
4) ֆաներոզոյան — պալեոզոյան — ծովային անողնաշարավորների զարգացում

23 **«Լեռնագրական միավոր — վտակ — գետ — գետային ավազան» շարքերից ո՞րն է ճիշտ։**

1) Ծաղկանց լեռներ — Արևմտյան Եփրատ — Եփրատ — Պարսից ծոց
2) Արևելապոնտական լեռներ — Օլթի — Ճորոխ — Սև ծով
3) Հաքյարի լեռներ — Ախուրյան — Արաքս — Կասպից ծով
4) Հայկական Տավրոս — Արևելյան Տիգրիս — Տիգրիս — Սև ծով

24 **«Լիճ — ծագում — աղիություն — տեղադիրք» համապատասխան շարքերից ո՞ր տարբերակում կա *սխալ։***

1) Աթաբասկա — սացադաշտային — քաղցրահամ — Հյուսիսային Ամերիկա
2) Չադ — մնացորդային — աղի — Աֆրիկա
3) Վեներն — տեկտոնական — քաղցրահամ — Եվրոպա
4) Կուրիլսկոյե — խառնարանային — քաղցրահամ — Ասիա

25 **Հետևյալ «պետություն-մայրաքաղաք» շարքերից ո՞րն է ճիշտ.**

1. Սուրինամ	ա.Ուագադուգու
2. Բուրկինա Ֆասո	բ.Տեգուսիգալպա
3. Բրունեյ	գ.Ֆունաֆուտի
4. Հոնդուրաս	դ.Բանդար Սերի Բեգավան
5. Տուվալու	ե.Պարամարիբո
6. Լիխտենշտեյն	զ.Վադուց

1) 2-դ, 5-զ, 4-գ, 2-բ, 3-ա, 6-ե
2) 1-բ, 5-գ, 6-ա, 3-դ, 4-բ, 2-ե
3) 2-գ, 3-ա, 1-ե, 4-դ, 5-բ, 6-զ
4) 1-ե, 5-գ, 6-զ, 4-բ, 2-ա, 3-դ

26 **Ո՞ր բնական զոնան է Հյուսիսային Ամերիկայում տարածվում գրեթե միջօրեականի ուղղությամբ.**

1) արևադարձային խոնավ անտառներ ու սավաննաներ
2) տունդրա
3) մշտականաչ կոշտատերև անտառներ և թփուտներ
4) սառցային

27 **Արդյո՞ք հնարավոր է, որ միևնույն գետի Ա տեղամասում գետի ջրի ծախսը լինի 3մ³/վ, իսկ կենդանի կտրվածքի մակերեսը՝ 3մ², իսկ Բ տեղամասում՝ համապատասխանաբար 3մ³/վ և 1,5մ²:**

1) այո, միայն տափաստանային գոտու գետերի համար
2) միանշանակ այո
3) այո,միայն անտառային գոտու գետերի համար
4) միանշանակ ոչ

28 **Ստորև թվարկվածներից ո՞րը *չի* մտնում Կայուն զարգացման հնարավոր ներդաշնակեցման մեջ:**

1) մշակութային խնդիրներ
2) տնտեսական խնդիրներ
3) սոցիալական խնդիրներ
4) էկոլոգիական խնդիրներ

29 **Ջրի ո՞ր հատկանիշն առավելապես մեծ ազդեցություն ունի կլիմայի ձևավորման վրա.**

1) ջրի ակուստիկ հատկությունը
2) ջրի շարժունակությունը
3) ջրի ինքնամաքրման հատկությունը
4) ջրի մեծ ջերմունակությունը

30 **Աշխարհագրական թաղանթի գոտիականության ձևավորման վրա ազդող հիմնական գործոններից է.**

1) երկրաբանական կառուցվածքը
2) վերընթաց գոտիականությունը
3) երկրի գնդաձևությունը
4) հողաբուսական ծածկը

31 **Կորիոլիսի ուժը օդի ինչպիսի՞ տեղաշարժի վրա առավելապես մեծ ազդեցություն ունի.**

1) տոռնադոներ
2) պասսատներ
3) վերընթաց հոսանքներ
4) վարընթաց հոսանքներ

32 **Ընտրել ճիշտ պնդումները։**

1) Հյուսիսային Ամերիկայի գետային ցանցի խտությունը և գետերի հոսքի ուղղությունը պայմանավորված է բնական զոնաների տարածվածությամբ։
2) Եվրասիայի տարածքում ցածր լեռները ձևավորվել են ժամանակակից գեոսիկնլինալային գոտում։
3) Սառցե ցունամիները իրենց գեղեցկությամբ հատկապես աչքի են ընկնում գարնանը և ձմռանը։
4) Ամռանը Կենտրոնական Ասիայի կլիմայի չորությունը պայմանավորված է մուսսոններով։
5) Աֆրիկայի սավանաներում ամբողջ տարին տաք է ու խոնավ, գերիշխում է բարձր խոտային բուսականությունը։
6) Մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրությունը ցույց է տալիս միայն մայրցամաքի դիրքը հասարակածի և սկզբնական միջօրեականի նկատմամբ։
7) Բոլոր ծովերում խորության մեծացմանը զուգընթաց ջրի ջերմաստիճանն իջնում է։
8) Կամերուն հրաբխի վերջին ժայթքումը տեղի է ունեցել 2002թ-ին։
9) Կարմիր ծովի մոտ է գտնվում Ասսալի իջվածքը -165մ բարձրությամբ։

33 **Ընտրել *սխալ* պնդումները.**

1) ՀՀ փայտամշակման ճյուղի տեխնոլոգիական շղթայում լրիվ բացակայում են փայտաքիմիական և թղթի-ցելյուլոզի արտադրությունը։
2) ՀՀ-ն էլեկտրաէներգիա արտահանող և համատարած էլեկտրաֆիկացված երկիր է։
3) ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքում կեսից ավելին պատկանում է սպասարկման ոլորտին։
4) ՀՀ արդյունաբերական արտադրանքի ծավալով առաջատար են Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերը։
5) ՀՀ-ում սև մետաղաձուլությունը զարգացած չէ։
6) ՀՀ-ում ամբողջական ավարտուն ցիկլ ունեն պղնձի, ոսկու, ալյումինի և մոլիբդենի արտադրությունները։
7) ՀՀ մեքենաշինությունն ունի ցրված տեղաբաշխում։
8) ՀՀ քիմիական արդյունաբերության ոչ հեռանկարային ենթաճյուղ է փոքր քիմիան։
9) ՀՀ արդյունաբերության նորագույն և հեռանկարային ճյուղերից է լազերային տեխնիկայի արտադրությունը։

34 **Ընտրել ճիշտ պնդումները.**

1) Մեքենաշինությունը, ի տարբերություն արդյունաբերության մյուս ճյուղերի, ունի կետային տեղաբաշխում։
2) Ունիտար պետություններում վարչատարածքային բաժանման միավորները ունեն սեփական սահմանադրությունը։
3) Աշխարհագրական դիրքը պետության վրա շատ լուրջ ազդեցություն ունեցող գործոն է։
4) Սպառողական տնտեսավարման ժամանակ աշխատանքի արդյունքը նախատեսված է արտադրողի համար, ինչպես նաև արտահանվում է շուկա։
5) Աշխարհի երկրների տնտեսությունների օրգանական միասնությունը, ամփոփված տնտեսական հարաբերություններով, կոչվում է համաշխարհային տնտեսություն։
6) Զարգացող երկրներում կրթությունը մատչելի է բնակչության բոլոր խավերին։
7) Հյուսիսային ծովում իր նշանակությամբ աչքի է ընկնում Քիլի ջրանցքը։
8) Ավտոմոբիլային տրանսպորտը ներկայումս արագ զարգացող ճյուղ է։
9) Կոտ դ՝Իվուարը,Գանան, Սենեգալը տալիս են համեմունքների համաշխարհային բերքի 2/3-ը։

35 **Ընտրել ՀՀ-ի վերաբերյալ ճիշտ պնդումները.**

1) Սևանա լճի արևելյան ափին՝ միջօրեականի ուղղությամբ ձգվում է Գեղամա լեռնավահանը։
2) ՀՀ տարածքում ոսկին «արմատային» հանքերում հանդես է գալիս սև մետաղների հետ։
3) Հրաբխային ապարաշերտերում լայն տարածում ունեն օբսիդիանն ու պեռլիտը։
4) Փոքր Կովկասի հյուսիսային ծալքաբեկորավոր լեռնաշղթաների մարզին է պատկանում Ուրծի լեռնաշղթան։
5) Հայաստանի և Թուրքիայի պետական սահմանի ուղղությամբ ձգվում են Գուգարաց լեռները։
6) Արարատյան դաշտի երկրաբանական հիմքը ծածկված է երիտասարդ լճագետային նստվածքներով։
7) Նստվածքային ծագման ապարներից հատկապես աչքի է ընկնում պեռլիտի պաշարներով։
8) Փոքր Կովկասի Հյուսիսային լեռնաշղթաների արտաքին շարը կազմում են Արեգունու, Արևելյան Սևանի և Մռավի լեռնաշղթաները։
9) Զուգահեռականի ուղղությամբ՝ Ամուլսարից մինչև Արաքսի հովիտը ձգվում է Զանգեզուրի լեռնաշղթան։

36 **Ընտրել ճիշտ պնդումները.**

1) Ռուրուրբանիզացիայի դեպքում փոխվում է գյուղական բնակչության բնույթը, որը բերում է քաղաքի և գյուղի միջև տարբերության ավելի խորացմանը:
2) Կեղծ ուրբանիզացումը չի ուղեկցվում տնտեսության համարժեք զարգացմամբ:
3) Խոշոր քաղաքներում և քաղաքային ագլոմերացիաներում առկա չեն բոլոր պայմանները զարգացած քաղաքային միջավայրի ձևավորման համար:
4) Որբանիզացումը տնտեսապես զարգացած երկրներում ընթանում է շատ արագ:
5) Հայաստանը ուրբանիզացման համեմատաբար բարձր մակարդակ ունեցող երկրներից է:
6) Ագլոմերացիաները կարող են ձևավորվել ծովափնյա, լճափնյա, գետափնյա տարածքներում:
7) Գերմանիայի խոշորագույն քաղաքային ագլոմերացիան Բեռլինն է:
8) Սուբուրբանիզացիայի գործընթացի մեջ ներառված են միայն մերձակա արվարձանները:
9) Երևանյան քաղաքային ագլոմերացիան բնորոշվում է բնակչության և կառուցապատման խտությամբ և սոցիալ-տնտեսական կապերի ոչ մեծ ինտենսիվությամբ:

37 **Ստորև նշված երկրներից որո՞նք *չեն* մտնում ԵՄ կազմի մեջ:**

1) Իսլանդիա
2) Նորվեգիա
3) Շվեդիա
4) Ֆինլանդիա
5) Լատվիա
6) Լիտվա
7) Էստոնիա

38 **2007 թ.-ի տվյալներով ատոմային էլեկտրակայանների բլոկների քանակով ո՞ր երկրները *չեն* մտնում առաջին տասնյակի մեջ:**

1) Բրազիլիա
2) Կանադա
3) Ռուսաստան
4) Իրան
5) Շվեդիա
6) Հայաստան
7) Ուկրաինա

39 **Աշխարհում հայտնի գիտական կենտրոններից որո՞նք են գտնվում ԱՄՆ-ում:**

1) Յեյլ
2) Քեմբրիջ
3) Ստենֆորդ
4) Օքսֆորդ
5) Հարվարդ
6) Սորբոն
7) Փրինստոն

40 **Ստորև թվարկված ջրանցքներից ու նեղուցներից ո՞ր նեղուցներն ունեն սահմանափակ տարածաշրջանային նշանակություն:**

1) Բերինգի
2) Քիլի
3) Կորնթոսի
4) Սուեզի
5) Պանամայի
6) Հորմուզի
7) Մալակկայի

41 **Ստորև թվարկված պնդումներից որո՞նք *չեն* վերաբերում բուսատեխնոլոգիաներին:**

1) բուսատեխնոլոգիաները չեն պահանջում զգալի տարածքներ, կայանների կառուցման համար
2) ունեն ցածր արժեք
3) փակ ջրաշրջանառության համակարգի ներդրումը
4) էլեկտրաէներգիա չի օգտագործում
5) մինչև ջրային օբյեկտ բացթողումը մաքրված ջուրն անհրաժեշտ չէ քլորացնել
6) հոսքաջրերին ավելացնում են հակազդող նյութեր
7) սպասարկող անձնակազմի անհրաժեշտություն չկա

42 Ստորև նշված հակամարտություններից որո՞նք են միջպետական:

1) Լեզգիստան
2) Ֆոլկլենդյան կղզիներ
3) Հարավային Օսեթիա
4) Կուրիլյան կղզիներ
5) Շոտլանդիա
6) Քաշմիրի նահանգ
7) Բասկերի երկիր

43 Ի՞նչ նիշի վրա կգտնվի ջրասուզակը Մեռյալ ծովում, եթե սուզվել է 18մ:

_____
_____
_____
_____
_____
_____

44 Ինքնաթիռը օդ բարձրացավ 45 աստիճան արևելյան երկայնության Ա քաղաքից, գոտիական ժամանակով, ժամը 6:30-ին և վայրէջք կատարեց Բ քաղաքում, գոտիական ժամանակով, ժամը 6:30-ին՝ թռչելով 1 ժամ: Ժամային ո՞ր գոտում է գտնվում Բ քաղաքը:

_____
_____
_____
_____
_____
_____

45 Ի՞նչ երկարություն կունենա հարթ տեղանքում տեղադրված 10 մ բարձրությամբ շենքի ստվերը հունիսի 22-ի կեսօրին, հյուսիսային 68,5 աստիճան աշխարհագրական լայնությունում:

_____
_____
_____
_____
_____
_____

46 Որքա՞ն կլինի նույն ճանապարհով հետ վերադարձի ազիմուտը, երբ մեկնման ազիմուտը կազմել է 217°:

47 Թարմ ձյան 1 սմ խորանարդը պարունակում է 0,1 գրամ ջուր: Որքա՞ն կլինի ձյան շերտի բարձրությունը (սմ-երով), եթե տեղումները կազմել են 15 մմ:

48 Որքա՞ն կկազմի այսբերգի ծավալը, երբ ջրի մակերևույթին ունի 100 մ խորանարդ ծավալ:

49 Որոշել կայծակի հեռավորությունը, եթե կայծակի լուսավորումից հետո որոտը լսվեց 6 վայրկյան հետո (ձայնի արագությունը օդում 350 մ/վ է):

50 Վանա լճում ընկած է քաղցրահամ ջրով (+4˚C) ամբողջությամբ լցված 1 լիտրանոց շիշ: Շշի քանի՞ տոկոսը ծածկված կլինի ջրով: Պատասխանը կլորացնել ամբողջ թվի ճշտությամբ:

51 Հաշվել գետի երկարությունը, եթե ակունքի բարձրությունը՝ 3500 մ, գետաբերանում՝ 900 մ, գետի միջին թեքությունը՝ 20 մ/կմ:

52 Քարտեզի մասշտաբն է 1 : 5 000 000: Հաշվել ՌԴ տարածքի (17,4 մլն կմ²) ընդգրկվածությունը տվյալ քարտեզում (սմ²):

53 Կանադայի բնակչության թիվը 34900000 է, բնական աճի ցուցանիշը՝ 0,9 % : Որքան կլինի բնակչության թիվը 3 տարի անց, եթե բնական աճի ցուցանիշը նույնությամբ պահպանվի: Միգրացիայի մնացորդը համարել 0: Պատասխանը մոտարկել ամբողջ թվի ճշտությամբ:

54 Որքա՞ն է պետության ռեսուրսապահովվածությունը 1 շնչի հաշվով, եթե երկաթաքարի տարեկան արդյունահանումը կազմում է 20 մլն. տ., բնակչությունը 32 մլն մարդ է, իսկ արդյունահանման այս տեմպերը պահպանելու դեպքում երկաթաքարի պաշարները կբավարարեն 80 տարի:

55 Երկրի բնակչության թիվը 24 մլն. էր, իսկ բնական աճը 25‰: 1 տարի հետո բնակչության թիվը դարձավ 26,5 մլն.: Հաշվել միգրացիայի սալդոն (մնացորդը):

56 Քանի՞ աստիճան կկազմի Արեգակի ճառագայթների անկման անկյունը սեպտեմբերի 23-ին Մարյատո հրվանդանի վրա:

57 Հաշվել 230 տոննա նավթից ստացվող էլեկտրաէներգիայի քանակը:

58 Մարզում կարտոֆիլի միջին բերքատվությունը 350 ց/հա, ընդհանուր բերքը կազմել է 770 000 տոննա: Որոշել կարտոֆիլի ցանքատարածությունների մակերեսը (հա):

59 Որոշել մթնոլորտային ճնշումը լեռան գագաթին, եթե լեռը գտնվում է ծովի ափին, 45° աշխարհագրական լայնության վրա, լեռան ստորոտին օդի ջերմաստիճանը 0°է, իսկ գագաթին՝ -18°C (հաշվարկը կատարել 6°-ով):

60 Արշավախումբը Հյուսիսային բևեռային շրջագծից շարժվեց հյուսիս և կանգ առավ այնտեղ որտեղ բևեռային ցերեկների տևողությունը 50 օր է: Որոշել արշավախմբի գտնվելու աշխարհագրական լայնությունը: Պատասխանը կլորացնել աստիճանի ճշտությամբ: